օրիորդական դպրոցի 2 ր. 10 կ., Աշակերտներ Ղլպարի հայ թեմական արական դպրոցի 4 ր. 80 կ., Մկրտիչ Անանեանց 2 ր. 10 կ.։

Ընդամենը 85 բուբլի։

Մկրտիչ Անանեանց

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ՍՏԱՎՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են, որ հայ ժողովուրդը չունի մի օրինաւոր քահանայ և գտնված միակ քահանան բոլորովին ոտքու և անկիրթ մէկն է։ Այսու ամենայնիւ գտնվում են ժողովրդի մէջ այնպիսի միամիտներ, որոնք աշխատում են այդ ոտքու հոգեորականին բարձր հոգևոր իշխանութեանից խաչ և կամբավկա բերել տալ։ Նոյն տեղից մեզ հաղորդում են, որ հայոց դպրոցը չատ ոդրայի դրութեան մէջ է. նա բոլորովին գիներան է նմանում և հէնց գիներան տանի է գտնվում։ Հոգաբարձութիւնը ոչինչ ուշադրութիւն չէ դարձնում այդ դպրոցի վրա և ահա երկու տարի է անցել որ ժողովրդին ոչինչ հաշիւ չէ ներկայացրել։

—

ՍՏԱՎՐՊՈԼԻՑ մեզ գրում են. «Մեր քաղաքի շրջակայքում, և մանաւանդ Ղալմուխների կոչված անապատում երևեցաւ մորեխ մեծ քանակութեամբ։

—

ԴԻԼԻՋԱՆԻՑ մեզ գրում են, որ այս տարի աւազակութիւններ այդտեղ սաստիկ բազմացել են և համարեա թէ օր չէ անցնում, որ դաստերից գիւղացիների անասունները չը յափշտակէին։ Այս աւազակները Ղազախ գաւառի Շիրի, Սալահլի և այլ գիւղերի թուրքերիցն են, որոնք գաղթել են Ղէպի Պիլիջանի կողմերը իրանց հօտերը արածցնելու համար։ Նոյն տեղից գրում են մեզ որ այս տարվայ ցանքերը առատ հուոնգ են խոստանում։

—

ՀԻՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են յունիսի 26-ից հետևեալը. «Այստեղ առատութիւնը հետզհետէ երևում է այժմ։ Արտերը արդէն հնձում են։ Այսօր գարիի պուդը ծախվում է 70—75 կոպէկ, ցորենը 1 ր. 60 կ.—1 ր. 80 կ. պուդը, հացը ֆունտը 6 կոպէկով առավելն տեսակը և 4 կոպէկով երկրորդ տեսակը, պանիրը 18 կամ 16 կոպէկ, միսը 8 կամ 9 կոպէկ։

—

Մեզ գրում են ԹՄՈՒԻԼ գիւղից, Նէն-Նախիջևանի գաւառից, որ պ. Բաղալ Շահնազարեան կօսանդիանից կոպեկել է 5000 բուբլ յօգուտ Հին-Նախիջևանի երկսեռ դպրոցների։ Այդ կըտակը հաստատեցին Թեմական տեսուչ պ. Պաօլեանց և տեղական նօտարիուսը։ Թմուլ և Շըմամաքուզ գիւղերի դպրոցների համար նոր հոգաբարձուներ ընտրվեցան։ Ա.հասարակ գիւղերը աւելի լաւ են զբաղում քան թէ քաղաքը։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ այդտեղ տիրում է մի վատ սովորութիւն, այն է 12 կամ 13 տարեկան աղջկան ամուսնացնել 40—50 տարեկան մարդու հետ։ Նորերումս պատահեցաւ մի այսպիսի օրինակ, մի տան և երեք տարեկան աղջիկ պսակեցին մի յիսուն տարեկան ծերունու հետ։

—

Սատաքիք ԹԻՖԼԻՍՈՒՄ բնակվող բժշկապետ Մարկոսեանից 25 բուբլ յօգուտ Վանի սովատանջների։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

«Голосъ» լրագրին Փարիզից գրում են յունիսի 29-ից։

Այս օրը Ֆրանսիական Հանրապետութեան պատմութեան մէջ անմոռաց կը մնայ։ Միաբանութիւնների դէմ սկսված պատերազմը այսօր առաջին անգամ բռնաբարութեան ձև է ստանում։ Ոչ օր չէ կարող նախագուշակել, թէ այդ պատերազմը ինչով կը վերջանայ։ Այժմ արդէն ուշ է դատել, արդեօք լաւ թէ վատ վարվեցաւ Ֆրանսիական կառավարութիւնը, հրատարակելով մարտի 29-ի հրամանները։ «7-դ յօդուածը մեծ յիմարութիւն էր, հրամանները աւելի էլ մեծ, բայց այժմ այդ հրամանների յետ վերդնելը անպիսի խեղաթարութիւն կը լիներ, որ կարող էր հանրապետութեան վիզը ջարդելը, սաստ ինչ Դամբետտայի մոտ բարեկամներից մէկը, երբ ես նրան հաշուեցի այն դժուարութիւնները, որոնք կը ծագեն այդ հրամանները կատարելու ժամանակ։

Այն արգութիւնը, որով հրատարակվեցին այդ հրամանները, դժուարութիւնների պատճառ է դառնում։ Քանի որ կառավարութիւնը վճռեց համբերել բոլոր միաբանութիւնները բացի եզուիտներից, նա պէտք է գոյութեան իրաւունք տար բոլոր միաբանութիւններին, բացի եզուիտներից։ Իսկ այդ միաբանութիւնների գոյութիւնը կախված անել կանոնադրութիւնների կառավարութեանը ներկայացնելուց, մեծ սխալ էր։ Մի՞թէ կարելի էր չը գուշակել, որ միաբանութիւնները չէին համաձայնի ներկայացնել իրանց դարերով սրբացած կանոնադրութիւնները ազգային ժողովի մեծամասնութիւնը կազմող անընդունակ մարդկանց քննութեանը։ Բացի այդ պետական մեծ ընդունակութիւն ունենալ չէր հարկաւոր հասկանալու համար այն հանգամանքը, որ միաբանութիւնները դէպքից օգուտ կը քաղէին և իրանց վիճակը եզուիտների վիճակի հետ կը կապէին կառավարութեան համար դժուարութիւն ծագեցնելու դիտաւորութեամբ։

Այսպէս թէ այնպէս կառավարութիւնը այժմ անկարող է պնդել, որ իր բոլոր հրամանները կատարվին։ Ինչ ուզում են թող ասեն կառավարութեան պաշտօնական լրագիրները, բայց ես չեմ կարող երևակայել, որ կառավարութիւնը, կասկածաւոր հրամանների հիման վրա, արձակէ իրանց վանքերից հազարաւոր տղամարդկանց և կանանց։ Այդ վարդապետների և կոյսերի երեք քառորդը բացառապէս բարի գործերով է պարապում։ Կանանց այն վանքերի մէջ, որոնց աքսոր է սպառնում, կան այնպիսիներ, որոնց մէջ գեսեղված է ամբողջ աշխարհի կաթոլիկ արիստոկրատիայի փունջը և որոնք իրանց ամբողջ հարստութիւնը բարեգործական նպատակով են ծախսում։ Բոլոր վանքերի փակելու հետևանքը ի միջի այլոց այն կը լինի, որ աղքատները և որբերը հարիւր հազարներով կը զրկվեն կերակուրից և բնակարանից։ Հիւանդանոցները տասնեակներով առանց աղախիների կը մնան։ Ոգորված քոյրերը ֆրանսիական հիւանդանոցների մէջ ծառայող կանանց միակ տարը են կազմում։

Ձշմարիտ է մի քանի քաղաքային վարչութիւններ զումարներ են նշանակում այն ծերերին և որբերին պահպանելու համար, որոնց սպառնում է սովը, բայց դա մի անհնարին օգնութիւն է և հազիւ կը կարողանայ անհրաժեշտ պահանջներին բաւականութիւն տալ։

Այս պատճառով շատ հաւանական է, որ կառավարութիւնը կը բաւականանայ միայն եզուիտների արձակելով։ Եզուիտները չեն կասկածում, որ նրանք այսօր Ֆրանսիայում վերջին օրն են անցկացնում։

ԲԵՐԼԻՆԻ ԿՕՆՖԵՐԵՆՑԻԱՅԻ ՎՃԻՌ

—

Յունիսի 1-ին տարագրած Բերլինի կոնֆերենցիայի վերջնական վճիռը պատմէ է այն պատմական պատճառների թելով, որոնք ստիպեցին Յունաստանին Բերլինի կոնգրէսի 24-դ պրոտոկոլի և Բերլինի դաշնագրի 13-դ յօդուածի հիման վրա դիմել պետութիւնների միջնորդութեան։ Այնուհետև սկսվում է յոյն-թուրքական նոր սահմանի որոշումը, որ արդէն յայտնի է «Մշակի» ընթերցողներին։ Այս վճռի վրա աւելացրած են այն խորհուրդները, թէ ինչ պէտք է անել նոր սահմանները հաստատելու ժամանակ։ Այդ խորհուրդները չատագանց նմանում են Բերլինի դաշնագրի վճիռներին։ Որովհետև Յունաստանը պէտք է ընդունի Թուրքիայի պետական պարտքի մի բաժին, պետութիւնները այդ բաժնի քանակութիւնը կորոշեն ազգաբնակութեան թուի համեմատ։ Վճռի շարունակութիւնը, հիմնվելով յունական սահմանադրութեամբ շնորհված կրօնի ազատութեան վրա, ասում է. «Յունաստանին գրված երկիրներում դատաւորեան կամ կրօնի զանազանութիւնը չէ կարող առիթ տալ մէկին քաղաքային կամ քաղաքական իրաւունքներից զրկելու համար։ Ամենքը կարող են հասարակական պաշտօններ, կոչումներ և պատուաւոր տեղեր ստանալ, կամ պարապել զանազան արհեստներով և արդիւնաբերութեամբ որտեղ էլ կամենան։ Բոլոր կրօնների եկեղեցական արարողութիւնների ազատութիւնը և նրանց հասարակօրէն կատարելը պէտք է ապահովված լինեն բոլոր տեղացիների և օտարականների համար։ ոչինչ արգելք չէ կարելի դնել զանազան դատաւորեանների երդմնական կազմակերպութեանը, կամ զանազան դատաւորեանների պատկանող անձանց յարաբերութիւններին դէպի իրանց հոգևոր հայրերը։ Հողային հարցերի մասին հետևեալն է ասված. «Մահմեդականները կամ ուրիշները, որոնք անշարժ կալքեր ունեն Յունաստանի հետ միացած երկիրներում և կամենում են բնակվել յունական սահմաններից դուրս, կարող են պահել իրանց կալքերը, նրանց կալալով տալ, կամ նրանց կառավարութիւնը մի երրորդ անձի յանձնել։ Ոչ ոք չէ կարող մի ուրիշի կալքը ձեռք բերել մինչև որ կալաւածատերոջ հետ համաձայնութիւն չը կայանայ։ Յոյն-թուրքական մասնաժողովին կը յանձնվի կարգադրել Բ. Դրան պատրաստելու կալուածների, բարեգործական և եկեղեցական գումարների կառավարութիւնը, գործածութիւնը կամ ծախելը, նոյնպէս և այն հարցերը, որոնք շօշափում են մասնաւոր անձանց շահերը։ Այդ վերջնական վճռին աւելացրած է տեխնիկական մասնաժողովի զեկուցումը։ Այդ զեկուցման մէջ դարձեալ նկարագրվում են նոր սահմանները։ Զեկուցումը մատնացոյց է անում սարատեգիական կէտերի վրա և ցոյց է տալիս այն պատճառները, որոնց հիման վրա վիճելի կէտերից դրանք են ընտրված։ Կոնֆերենցիայի վճիռը իրագործելու մասին ոչինչ չէ ասված։ Յունաստանը և Թուրքիան հրաւիրում են համաձայնել այդ վճռի հետ։ Մասնաւորապէս Յունաստանին ցոյց է տրվում այն պատրաստակամութիւնը, որով պետութիւնները վերաբերվեցին դէպի նրա իրաւունքները։ Մնացածը թողված է պետութիւնների կամքին, որոնց գործունէութեան սկիզբը «հրաւիրագիրը» կը լինի։

ԹՈՒՐՔԻԱ

—

Կ. Պոլսից „Polit. Corresp." լրագրին գրում են հետևեալը յունիսի 25-ից։

Չէ կարելի ասել, որ Բ. Դուռը մեծ անհամբերութեամբ սպասում է Բերլինի կոնֆերենցիայի վճիռներին։ Նա լաւ իմանում է, որ այդ վճիռները անպայման ստիպողական բնաւորութիւն չեն ունենայ և որ նրանց իրագործելը մեծ պետութիւններից մէկին չի յանձնվի։ Թուրքայ կառավարութիւնը լաւ իմանում է, որ նրան ոչ ոք չի ստիպի պատերազմել ալբանցիների հետ յոյների պատճառով։ Նրան է նրանի առանձնք այն աշխատանքները և ծախսերը, որ արել է Բ. Դուռը ալբանական միութիւնը կազմելու համար և այն հանգամանքները, որ արտաքին գործերի այժմեան մինիստրը այրանցի է, որ սուլթանը շրջապատված է ալբանացիներով, գժուար չի լինի հասկանալ, որ, եթէ յոյների և ալբանցիների մէջ կռիւ պատահի, սուլթանը կը համակրի այդ վերջիններին, իսկ թուրքայ կառավարութիւնը կօգնի նրանց բարբարական և գրաբարական միջոցներով։ Թուրքայ կառավարութիւնը արդէն հիմիկուց դրա համար պատրաստութիւններ է տեսնում։ Վեց նահանգից հացի գուրս տանելը արգելված է։ Սալոնիկից Մակեդոնիա և Մոնաստիր զորքեր և թնդանոթներ են ուղարկվում բնակիչը նաւերով։ Ալբանական միութիւնը թնդանոթների պատաստութիւն ունի, բայց կարողանում է նրանց ձեռք բերել թուրքայ կառավարութեան միջնորդութեամբ։ Այս բոլորից երևում է, որ յունական զորքերի խարազ վճռվելը գեռ շատ ժամանակ կը տևէ։ Ալբանական աղբիւրներից եկած տեղեկութիւններից երևում է, որ ալբանական միութիւնը այժմ մոտ 52,000 դիմադրված մարդ ունի, 30000 Հէնրին Մարտինի և 70000 Մաֆլզերի հրացաններ, բացի այդ բաւականաչափ դաշտային, լեռնային և ամրոցների թնդանօթներ։ Անուանի ալբանացիները յայտնել են, որ յոյներին յաղթելու համար, եթէ հարկաւոր լինի, նրանք կը միանան պարկանների հետ։ Թուրք լրագիրները նորերումս հաղորդեցին, որ սուլթանը Արեգդին-փաշային մի նշանաւոր գումար է ընծայել։ Ի նկատի ունենալով թուրքայ ֆինանսների այժմեան դրութիւնը, այդ լուրը ամենքին զարմացրեց։ Ալբանցիների անհամաձայնութեան շնորհիւ շուտով իմացվեցաւ, որ այդ գումարը աուած է ալբանական միութեան պատերազմական պատրաստութիւնները ուժեղացնելու համար։ Երևի Զեքնօզօրիայի հարցը յունականից աւելի շուտ կը վճռվի։ Թայանի է, որ թուրքայ կառավարութեան պատասխանը Զեքնօզօրիայի վերաբերութեամբ բաւական ուշացել է։ Ալբ հանգամանքը մեկնվում է սուլթանի ինքնասիրութեամբ։ Նա չէ կամենում, որ իր մասին ասեն, թէ ինքը հնազանդվեցաւ Եւրոպայի ստիպողական պահանջներին։ Սուլթանը չէ կամենում, որ Զեքնօզօրիան ստանայ Դուլցինոյի նահանգը, որովհետև իր բնակիչների մեծամասնութիւնը մահմեդականներ են կազմում։ Այնուամենայնիւ առնաց գեսպան պ. Նօվիկով այդ պահանջում է և դրա մասին երեք ժամ շարունակ յունիսի 21-ին վիճում էր Արեգդին-փաշայի հետ։ Ռուսաստանը ցանկանում է, որ Զեքնօզօրցիները անպատճառ բաւականութիւն ստանան և այն ձևով, որ ալբանցիների համար վիրաւորական չը լինի։

Թուրքայ կառավարութիւնը նորերումս մի այնպիսի կարգադրութիւն է արել, որ ազգարկութեան համար վատ հետևանքներ կունենայ։ Բանը նրանումն է, որ բանկիրներին կապալով տուած վեց կողմնակի հարկերը շատ պակաս եկամուտ են տալիս, քան թէ նախադրված էր։ Կառավարութիւնը հրամայել է, որ տուրքեր ժողովելու ժամանակ հաւաքողներին օգնական զինուորներ տրվեն և զինուորական միջոցով այդ բռնադատութեան հրամաններ է ուղարկել գօրքերի հրամանատարներին։ Ի նկատի ունենալով թէ բռնաբարների կողմից հարկերը և ազատութիւնը, կարելի է հաւանացնել, որ տուրքերը հաւաքելու ժամանակ մեծ անկարգութիւններ կը պատահեն։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի։ Երէկ ուղևորվեցաւ Մոսկվա Մեծ ոսկիահատ մեջ եղած առատաց նաւատորմի գլխաւոր հրամանատար Լեսովսկի իր ամուսնու և սիփտայի հետ։ Հաստատվում են այն լուրերը, որ Զօրխու ներված է։

ԼՈՆԴՈՆ, 2 յունիսի։ Երէկ Մարիկ Ցինդ ուղևորվեցաւ Պետերբուրգ Փարիզի վրա։

ՄՈՍԿՎԱ, 2 յունիսի։ Այսօր փոխադարձաբար Լեսովսկի անցաւ Մոսկվայից։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 2 յունիսի։ Ներքին առաջին 5% փոխառութեան տիրաժի գլխաւոր տարած գումարները։

№ սերիի	№ տոմ	տար. գումար
765	45	
12723	47	
13575	16	
14283	46	
2919	8	
4916	18	
11809	41	
14393	44	
7187	41	
9934	1	1000
11065	22	
12101	36	
10367	14	
13341	40	
18234	19	
3777	22	
15162	32	
7463	27	
411	49	
16756	5	

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ